





ՄԵՐ ՁԱԳԻՄՆԵՐ

ՄԲ ՁԱԳԻՄՆԵՐ

ԿՐԵԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՐԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏԻԱՐԻԱՐԱՆԻ



ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՌՈՎՄ

18

1. Կաթողիկէ Արժագանգը սոս ալժմ կը հրահարակուի ի Հոմ: Առաքին վիգանետայի բաժանորդագինն է մեկ մեհիս անոնց հաւար որ ի Կ. Պոլիս՝ Կաթողիկոսարանի մեջ, իսկ ի գաւառս՝ Եպիկոպոսարաններու կամ Առաքնորդարաններու մեջ կ'ազգեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հոմ որկեղու հաւար՝ Չորս (4) փրակ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտ Կ. Պոլիս փոխադրուի, ծաւալն ու ձեւը, ինչպէս հաւա բաժանորդագրութեան սրայիսն վերջնականապէս պիտի ճշդուին: — Մեկ քիւր՝ մեկ դանեկան է:

2. Արժագանգը կը հրահարակուի Եւրոպ օրերը:

3. Խոնքագրութիւնս պարճաւորեալ չի անպատճառ կամ անցնութեանը հրահարակեղու իրեն որկուած ո՛ր է յօղուած:

4. Ատորագրեալ յօղուածոց պատասխանատւութիւնը աւ-բողոքին կը մնայ գրողներուն վրայ:

5. Դանակ է յօղուածներ կը որկուին ուղղակի խոնք-գրութեան:

6. Ձեռագիրներ եւ չին դարձուիր:

7. Ծանուցեանց հաւար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՔԱՐԱՔԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

Առաջին Տարի	21 Հոկտեմբեր 1911	Թիւ 18.
-------------	-------------------	---------

ԱՐՁԱԳԱՆԿԱՆ ՊԱՏՐԻԱՐԿԱՆ ՍԻՆՆՈՒՄ

Ի ՀՈՒՎ Մ



Հայ-Կաթողիկէ Ազգային Պատրիարքական սուրբ Սինոդոսը սկսաւ ի Հոսմ, յաջողելով Տեառն և հրամանաւ և օրհնութեամբ Փոխանարդին Քրիստոսի՝ Սրբազան Բահանայապետին Պիոսի Ժ.ի: Քրիստոնէական ազգերու կեանքին մէջ նշանակալից եղած են միշտ այս տեսակ ժողովներ, որոնք տկարացած հաւատքը զօրացնելու, սպրդող մարտութիւնները արմատախիլ ընելու, ուղիղ ճամբէն շեղած ոչխարներն ի զգոստութիւն բերելու, խանգարուած կամ վտանգուած բարեկարգութիւնը պաշտպանելու, նորոգելու, զօրացնելու, և ուժացող սէրը միջոնագլով արծարծելու կը ծառայէին: Ժողովներու առաջին սրբազան օրինակը տուած են Առաքեալները, որոնք այլևայլ խնդիրներ լուծելու կամ սահմանելու համար կը գումար-

ուէին ի միասին, ինչպէս կը պատմուի Գործոց Ս. Գրքին մէջ: Այնուհետեւ շարունակուած է Եկեղեցւոյ մէջ այս բարի և մերթ անհրաժեշտ դարձող սովորութիւնը. և երբ ընդհանուր Եկեղեցւոյ Հայրապետներն առ հասարակ կամ մեծաւ մասամբ ի մի կը գումարուէին հագեկան կարեւոր խնդրոց վրայ որոշողութիւններ տալու և կանոններ հաստատելու համար, Տիեզերական կամ Ընդհանուր կը կոչուէր ժողովը կամ Սիւնհոգոսը: Իսկ մասնակի ժողովներու մէջ առաջին տեղը գրւած է Ազգային ժողովը կամ Սիւնհոգոսը որ Պատրիարքական իշխանութեամբ գումարուելով, ազգային Նուիրապետութեան ամբողջութիւնը կը ներկայացնէ. նոյն խնդրոցով կ'առնուի նաև Պատրիարքական Սիւնհոգոս: Իսկ Մետրապօլիտականը կ'անուանուէր Գաւառական ժողով, քանի որ կը համախմբուէին նոյն գաւառին վերաբերեալ Արքեպիսկոպոսներ ու Եպիսկոպոսներ: Իսկ Եպիսկոպոսական վիճակի մը մէջ գումարուած ժողովը կ'անուանուէր Թեմական Սիւնհոգոս:

Մեր ազգին մէջ ալ ի սկզբանէ հետէ այլ և այլ ժողովներ գումարուած են մերթ ընդ մերթ, կրօնական ու բարեկարգական խնդրոց վրայ կանոններ սահմանելու գիտմամբ: Սակայն անոնցմէ յառաջ եկած օգուտն անցաւոր եղած է. քանզի եկեղեցական օրինաց ընդհանուր բովանդակիչ Մարմին կամ Մատեան մը չէ կազմուած, Կանոնական Իրաւունք մը չէ յօրինուած սու մեզ, բանաւոր և գիտնական, ինչպէս Արեւմտեան Եկեղեցւոյ մէջ, այլ սահմանք ու Կանոնք մնացած են կցկտուր թափառական և իրարմէ անջատ, անյարիր և ստէպ անգործածական դարձած՝ ժամանակներու և սովորութիւններու փոփոխութեամբ. և գրեթէ անկարելի է այնչափ դարեւուհեութեան մէջ՝ ըլլայ Արեւելեան, ըլլայ ազգային ժողովներու մէջէն երթալ որոնել գտնել կանոնաւորել ու շարայարել այն կանոններն, մանաւանդ զտեղ անոնց պատշաճաւորներն, գործածելիները, և սահմանել զանոնք Կանոն առնելեաց: Իսկ Կաթողիկէ Հասարակութեանս մէջ ևս եղած են երբեմն Սիւնհոգոսներ, ինչպէս գլխաւորաբար ի Զմմառ 1850 ին՝ ընդ Նախագահութեամբ երջանկայիշատակ Գրիգորի Պետրոսի Ը.ի Կաթողիկոսի, և ի Կ. Պօլիս՝ յամին 1869, ընդ Գահերիցութեամբ երջանկայիշատակ Անտօնի Պետրոսի Թ.ի Կաթողիկոսի, պարագայից բերմամբ չլրացած. նոյնպէս ի Կ. Պօլիս՝ ի 1890, ի Քաղկեդոն գումարուած, ընդ գահերիցութեամբ երջանկայիշատակ Ստեփանոսի Պետրոսի Ժ.ի Կաթողիկոսի: Սակայն այս Սիւնհոգոսներու Գործքերը Ս. Գահէն հաստատուած չըլլալով, բնականաբար պարտաւորիչ հեղինակութիւն չունեցան Հասարակութեանս համար՝ իբր Կանոնական Իրաւունք:

Սակայն այսպիսի Մատենան մը ունենալ անհրաժեշտ էր՝ ամբողջ Հայ Կաթողիկէ Նաւիրապետութեան մէջ բարեկարգական կանոնները վերջնա- կանապէս սահմանելու և ամենուն համար անխտիր պարտաւորիչ ընելու, երբ հաստատուէր Առաքելական Սուրբ Աթոռէն: Ահա ինչո՞ւ համար Սրբա- ղան Հայրն մեր Պիոս Ժ. Իւր 30 Օգոստոս 1914 թուակիր նամակին մէջ, զոր կ'ազդէր առ Ամենապ. և Գերերջ. Կ. Պատրիարքն Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզիան, կը խօսէր այսպէս. « Հիմայ, նկատի առնելով ժամանա- կիս առանձին պայմաններն և տեսնելով Հայ-Եկեղեցւոյ ներկայ վիճակը, երկպառակութեանց բողբոջներն ձեր մէջէն արմատախիլ ընելու համար, իրաւանց վրայ վէճերու առջևն առնելու, եկեղեցական բարեկարգութիւ- նը ամրապնդելու, ձեր օրինաւոր աւանդութիւններն ու սովորութիւններն հաստատելու, կղերականաց և աշխարհականաց պարտքերն որոշելու հա- մար, վստահ ենք թէ շատ օգտակար պիտի ըլլայ ազգային Սիւնհոգոսի գումարումը »: Հետեաւոր այսքան բարիքներ յառաջ բերելիք Սիւնհո- գոսի մը համար ընդհանուրին խնամածու Հայրը, որ « Բնաւ չանտեսեց այն ամէն բան որ մեր ազգին հոգեւոր զարգացման օգտակար կ'երևին », ինչպէս կը վկայէ Ինքն իսկ Նոյն թղթին մէջ, հայրական հոգով ուզեց որ գումարուէր այդ Սիւնհոգոսը, և գումարուէր այն Իր քով, Իւր աչաց առջև, ի սեամս Առաքելոց, ի Հոսմ քաղաք, Մայր և Դատիարակ բո- վանդակ Քրիստոնէութեան, անգուգական պատիւ մը զոր Փախանորդն Քրիստոսի կ'ընէր Հոյ ազգին, ոչ իրրե անոնց պատգամաւորները, որոնք՝ ինչպէս աւանդութիւն մը կ'ազէ մեկնել Ս. Աւետարանի այն միջադէպը (Յովհ. ԺԲ. 20-23), Երուսաղէմ գնացած էին և մօտեցան Փիլիպպոսի ա- զաչելով որ Յիսուսը տեսնեն, և Փիլիպպոս եկաւ ու ըսաւ Անդրէասի, և երկուքը ի միասին ըսին Յիսուսի. և նա պատասխանեց թէ « Եհոս ժամ զի փառաւորեսցի Որդի մարդոյ »: ո՛չ այսպէս. այլ նա ինքն Փա- խանորդն Յիսուսի առ Իւր կոչեց ամբողջ Հայ Կաթողիկէ Նաւիրապետու- թիւնը. և վերոյիշեալ թղթովն « ՀՐԱՄԱՅԵՑ որ այդ ժողովը, որուն պի- տի նախագահէ Ամենապ. Տ. Պատրիարքը, գումարէ ինքն՝ սրբան հնար է, շուտով, և պատշաճ է որ տեղի ունենայ ի Հոովմ »: Կը յարէ նաեւ թէ « Այս Սիւնհոգոսին մէջ խօսուի Պատրիարքի և Եպիսկոպոսաց իրա-ւունքը յերայ, հաւատացելոց ուղիղ վարչութեան վրայ, Կղերի բարեկար- գութեան, Միանձանց հաստատութեանց, առաքելութեանց պիտոյքներու, աստուածային պաշտաման վայելչութեան վրայ, Ս. Արարողութեան և ասոնց յարակից խնդիրներու վրայ, զորս ամենայն զգուշութեամբ տահմա-

նելու է՝ ի մեծագոյն փառս Աստուծոյ և յառաւել պայծառութիւն հայ
Եկեղեցւոյ ։

Այսպէս Սրբազան Իշխանն Եկեղեցւոյ կը սահմանէր թէ՛ Սիւնհոգոսը
և թէ՛ անոր նպատակը, որ՝ ինչպէս տեանուեցաւ, պարզապէս հոգեւոր ու
կրօնական է, և ընաւ չզրադիր աշխարհական կամ յարաբերական գործի-
րով, ընաւ Կառավարութեան հետ Բաթրիքի կամ Մուրախխտաի առնչու-
թեանց վրայ վերջնական սահմաններ չգծեր, յարգադիր ըլլալով Պետական
արդար Օրինաց որ միշտ կը պաշտպանեն Կրօնքը, տալով անոր ամեն ա-
զատութիւն ։ Ի հակառակն տարածայնաւ թուր լուրերը, արտայայ-
տուած թուր մտացածին ենթադրութիւնները կամ տգիտական են և կամ
դիտումնաւոր ։ Բնական է սակայն որ խառն խնդրոց մէջ եկեղեցական
Կանոնաց պահպանութեան պիտի հսկէ Սիւնհոգոսը ։

Ուստի այսպիսի սրբազնասուրբ հրամանաւ և սկզբնապատճառով,
որ արդէն գուշակիչ նշան մի է բարեյաջողութեան, և սոյնօրինակ վսեմ
և ցանկալի նպատակաւ ի Հռոմ գումարեալ ազգային Պատրիարքական
Սիւնհոգոսը սկսաւ ամսոյս 15 ին, յեկեղեցւոյ Սրբոյն Նիկողայոսի Տօրն-
տինացւոյ ։ Հոս համառօտակի պիտի տանք անոր մանրամասնութիւնները ։

* *

Նախ և առաջ պէտք է ծանօթութիւն տանք այս Սիւնհոգոսը կազ-
մող ներկայ Հարց վրայ ։

Սակայն Սիւնհոգոսական Հարց ցանկին համար հարկ է նախապէս տե-
ղեկացնել թէ Սրբազան Քահանայապետը, Թափուր վիճակաց վերաբեր-
մամբ, նկատելով արդէն մի քանի թեմերէն տրուած բարի վկայութեանց
անգոհացուցիչ վիճակը, և պարագայից բերմամբ՝ այս անգամ ընդհանրա-
պէս բարի վկայութեանց գլմերու գրեթէ անյադթիլի դժուարութիւնը,
և խորհելով միանգամայն այսչափ թեմերու այլ և այլ անպատեհութիւն-
ներու պատճառաւ Թափուր միալուն համար կրած հոգեւոր և ժամանակու-
ւոր մեծամեծ վնասները, և ազգային Սիւնհոգոսը անմիջապէս գումարելու
անհրաժեշտ հարկը, նոյն Սրբազան Քահանայապետը՝ կ'ըսենք, իբր Գլուխ
ընդհանուր Եկեղեցւոյ, որոշեց՝ այս անգամուան համար միայն և բացառիկ
և արտաքայ կարգի եղանակաւ, Իւր Առաքելական Իշխանութեամբ ուղ-
ղակի և անընդմիջապէս անուանել այդ թեմերու Եպիսկոպոսները, և ա-
ռանձինն Պաշտօնագրով և յատուկ Համառօտագիրներովն անուանեց ու
կարգեց և հրամայեց Ամեն Կաթողիկոսին օծել զանոնք աստ ի Հռոմ իւրա-
քանչիւր Աթոռին վրայ (բաց յԱրփիարեան Գեր.էն որ արդէն Արք. է)

ինչպէս աւելի յայտնապէս պիտի տեսնուի այն՝ Ամենապ. Հոգեւոր Տեառն
առ առթիւ պատրաստած Կոնգակին մէջ, որուն մէկ օրինակը մենք այսօր
կը գնինք Արձագանգիս մէջ: Արդէն այդ նոր Եպիսկոպոսներն առանց բա-
ցառութեան օժտուած են ընտիր բարեմասնութիւններով, գիտութեամբ
և բարի վարուք. և ինչպէս որ իրենց քահանայութեան ատեն փառքն
եղած էին կղերին, նոյնպէս Նախրապետութեան բարձրագոյն աստիճանին
ալ պարծանքը պիտի ըլլան. և անշուշտ այն ժողովուրդները որոնց հովիւ
կարգուած են այսպիսի նախախնամական կերպով, պիտի չինուին անոնց
անբասիր կենցաղավարութենէն և պիտի ցնծան այսքան ընտիր հովիւներ
ունենալով, ինչպէս որ Սինոդական Եպիսկոպոսներն ուրախացան իրենց
այսքան պատուաբեր եղբայրակիցներ տրուելուն համար ի Ս. Քահանա-
յապետէն: Ուստի այս Եպիսկոպոսներն ալ յիրաւանց մտնելով Սինոդական
Հարց կարգը թիմական Հարց թուոյ մեծամասնութիւնը կարեւորէն շատ
աւելի կը ճոխանայ: Ահա ուրեմն կարգ Սինոդական Հարց ըստ երիցու-
թեան:

1. Ամենապ. և Գերերջ. Հոգեւոր Տէր, Պօղոս Պետրոս ԺԳ. Թէր-
զեան, Կաթողիկոս - Պատրիարք Տանն Կիլիկիոյ, յիրաւանց Գահերէց
Սիւնոդոսի:

2. Արհի. Յովսէփ Գեր. Թէոտորովիչ, Արքեպիսկոպոս Կաթողիկէ
Հայոց Լէոպոլսի (Լէմպէրկ) յԱւստրիա: Սա՝ որովհետեւ Պատրիարքական
Աթոռոյ վիճակակից չէ, և միանգամայն թիմական Եպիսկոպոս է, ոյր
վսան իրրեւ Նախագահ (Primato) նկատուելով, Կ. Պատրիարքէն անմի-
ջապէս վերջը՝ առաջին աթոռը կը գրաւէ ի Սիւնոդոսիս: Հասաւ բաց-
ման օրն իսկ:

3. Ըստ երիցութեան կարգի կուգայ ապա Արհի. Աւետիս Արքեպ.
Արփիարեան, Վիճակաւոր Եպիսկոպոս Գերմանիոյ (Մարաշ):

4. Արհի. Յուսիկ Արք. Կիւլեան, նախկին Վիճակաւոր Մամպուոյ
(Մարտին):

5. Արհի. Օգոստինոս Արք. Մայեղեան, Վիճակաւոր Բերիոյ (Հալէպ):

6. Արհի. Գրիգոր Արք. Գովրեկեան, Տիտղոսաւոր Մծբնայ, Ընդհան-
րական Արքայ Միսիթարեանց Վիեննայ: Հասած էր ի 13 ամսոյս:

7. Արհի. Պետրոս Արք. Գոյունեան, Տիտղոսաւոր Քաղկեդոնի, Ձեռ-
նագրիչ եպ. հայ ծիսի ի Հռոմ:

8. Արհի. Յովսէփ Արք. Ռոքոսեան, Տիտղոսաւոր Ակրիդայ. Կաթո-
ղիկոսական - Պատրիարքական Փոխտնորդ:

9. Արհի. Իգնատիոս Արք. Մալոյեան, Վիճակաւոր Մամպտոյ :
10. Արհի. Յովսէփ Եպ. Մեղրիսեղեկեան, Վիճակաւոր Կարնոյ
(Էրզրում) :

11. Արհի. Յակոբ Եպ. Թօփուզեան, Վիճակաւոր Տարօնոյ և Վառ-
պուրականի (Մուշ) :

12. Արհի. Յարութիւն Եպ. Քէջլիքեան, Վիճակաւոր Ատանոյ :

13. Արհի. Գրիգոր Եպ. Պահապանեան, Վիճակաւոր Անկիւրիոյ :

14. Արհի. Անտօն Եպ. Պահապանեան, Վիճակաւոր Կեսարիոյ (Գայ-
սէրի) :

15. Արհի. Յովհաննէս Եպ. Նրսիկեան, Վիճակաւոր Տրապիզոնի :

16. Արհի. Յովհան Եպ. Գուզեան, Վիճակաւոր Աղեքսանդրիոյ Ե-
գիպտոսի :

Միւնհոգոսի մասնակից ըլլալիք Եպիսկոպոսներէ ոմանք ինչ ինչ ար-
գելքներու պատճառաւ չկրցան գալ. ասոնք են .

1. Պօղոս Պետրոս ԺԲ. Մապաղեան, Նախկին Կ. Պատրիարք, հի-
ւանդութեանը համար մասնաւոր նամակաւ արտօնութիւն խնդրեց բու-
ցակայելու .

2. Արհի. Իգնատիոս Արք. Կիւրեղեան, Տիտղոսաւոր Տրայանուպօլի,
ընդհ. Աբրայ Մխիթարեանց Վինետկոյ, որ հիւանդութեանը համար ներու-
ղամտութիւնը խնդրեց Սրբազան Քահանայապետին և Ամինսայ. Կաթո-
ղիկոսին :

3. Արհի. Լևոն Արք. Քէչէճեան, Վիճակաւոր Սերաստիոյ - Եւդո-
կիոյ (Սիվաս Թօգատ) :

4. Արհի. Յարութիւն Եպ. Ճամճեան, Վիճակաւոր Պրուտոյ :

5. Արհի. Կորապետ Եպ. Քջուրեան, Տիտղոսաւոր, Նախկին Եպ.
Կարնոյ :

6. Արհի. Միքայէլ Եպ. Խոջատուրեան, Վիճակաւոր Մելիտինոյ
(Մալաթիա) :

7. Արհի. Անդրէաս Եպ. Չէլէպեան, Վիճակաւոր Տիգրանոսկերտի
(Տիարպէքի) :

8. Արհի. Ստեփան Եպ. Իսրայէլեան, Վիճակաւոր Խարբերդու :

9. Արհի. Մատթէոս Եպ. Սիսլեան, Տիտղոսաւոր Ամմետարայ :

Վերջին եօթը, որոնց շատերն արդէն Պօլիս կը սպասեն, և կը յուսու-
ցուի որ ի մօտոյ հասնին ի Միւնհոգոս :

Իսկ Սիւնհոգոսի գործոց համար այլևայլ Պաշտօնեայք կարգուեցան ըստ սահմանի կանոնաց .

1. Ջատագով Սիւնհոգոսի, Գեր. Գէորգ Գերապայծառ Թէրզիպաշեան .

2. Նօսար՝ Գերյ. Հ. Գրիգորիս Մ. Վ. Գալէմքեարեան .

3. Նօսարի Օգնական, Յարգոյ Անտօն Սարկաւազ Գաբոյեան .

4. Բարսուղար, Յարգ. Յովհաննէս Վ. Գուլումճեան .

5. Բարսուղար, Յարգ. Յովսէփ Վ. Յօղսէնի .

6. Բարսուղար, Յարգ. Յովսէփ Վ. Քիրէճեան .

7. Ընթերցող, Գեր. Յովհաննէս Վ. Նալպանտեան .

8. Արարողայե՛ս, Գեր. Մկրտիչ Վ. Աբգարեանց .

9. Արարողայե՛սի Օգնական եւ Դռնապան՝ Յարգ. Յակոբ Վ. Կիրակոսեան .

Սիւնհոգոսական գումարումներն երեք տեսակ են 1. Մասնակի Ժողովք . 2. Համագումարք . 3. Նիստք :

1. Համօրէն Հայրերն բաժնուած են Չորս Մասնակի Ժողովներու , յորոց իւրաքանչիւրը կ'ուսումնասիրէ նախապէս իրեն առաջարկեալ նիւթը , նկատի առնելով նաեւ միւս Հարց կողմանէ նոյն նիւթոյն վրայօք մատուցուած գրաւոր դիտողութիւնները . և ապա անոր վրայ իրին տեղեկագիրը պատրաստելով , իրեն մասնաւոր Նախագահին միջոցաւ պիտի մատուցանէ Համագումարին : Ուսումնասիրութեան ամբողջ նիւթն կամ Սիւնհոգոսական Գործի բաժնուած են տասն ու մէկ Տիտղոսներու , որոց ամէն մէկը ստորաբաժանուած է Գլուխներու և Համարներու :

2. Համագումար Ժողովն է յորում համօրէն Հարք ի մի կը գումարուին , ուր բոլոր պաշտօնեայք ներկայ են . և Մասնակի Ժողովներու մէջ ուսումնասիրուած նիւթերը կ'առաջարկուին ի քննութիւն , և թեր ու դէմ կը վիճուին ու կը կարգադրուին :

3. ՆիՍՏՆ է հանդիսաւոր , որ կը գումարուի եկեղեցւոյ մէջ , ուր Հարք կը բազմին հայրապետական զգեստներով . և Համագումարի մէջ պատրաստուած նիւթերու վրայ վճիռ կուտան :

* *

Սիւնհոգոսը սկսելէ յառաջ սուրբ Հայրերն երկու Ունկնդրութիւն ունեցան . Առաջինն էր՝ ի 10 Հոկտեմբերի , Ս. Ժողովոյ Տարածման Հաւատոյ Գահերէց Կօթթի Միբանաւորին , որ ուղղակի Մեծաւոր է Արեւելեան Մէսերու պատկանող Հասարակութեանց . Կրօնաւորական առաքինութեանց մարզանքով փայլած պատկառելի ծերունի մըն է՝ նշանակելի եղած է միշտ իւր գերազոյն խոհեմութիւնը և սակաւախօսութիւնը : Եղած է նաեւ մին

յառաջին ընտրելիաց Քահանայապետականն պատուոյն: Շատ սիրալիր կերպով ընդունեցաւ Սինոդականները. կէս ժամէն աւելի խօսեցաւ պարագայից յարմարութեամբ մանաւանդ նորընտիր Եպիսկոպոսներուն խրախոյս կարգաց կորովի և անխնջ և հայրագութ խնամածութեամբ աշխատելու իրենց հօտին մէջ, ի փրկութիւն հոգւոց:

Սրբազան Քահանայապետին ներկայացան Սինոդականք ի 1/4 Հոկտ. ի, Շաբաթ առաւօտ: Գեղեցիկ տեսարան մը կը պարզուէր Վատիկանեան ապարանից մէջ, երբ արուեստի ու ճոխութեան Գլուխ Գործոցներով զեղուն այն դահլիճներու և սենեակներու մէջէն կ'անցնէր արեւելեան Սինոդական Եպիսկոպոսաց մեծարեւի խումբը, Սինոգոսի Պաշտօնեաներով շրջապատուած: Սրբազանը ճիշդ ժամը 10 ին ընդունեցաւ Սինոդական Հայրերը, իւր սեպհական Գրասենեակին մէջ: Յետ աջահամբուրի, Սրբազանը հրաման ըրաւ ամենուն նստելու, և սիրալիր ողջոյն տուաւ ամենուն: Եւ երբ Ամենապ. Կաթողիկոսը ոտք կ'ելլէր իր ճառն արտասանելու համար, քաղցր ժպիտով մը հրաւիրեց և հարկադրեց զինքն նստելով խօսելու իւր ճառը. որոյ բովանդակութիւնն էր հետեւեալը.

Յանուն ներկայ և բացակայ Սինոդական Հարց Շնորհակալութիւն կը յայտնէ Նորին Սրբութեան՝ ընդ հալանեաւ իւր գերագոյն իշխանութեան գումարել Հայ-Կաթողիկէ ազգային ժողով մը, մատուցանելով Անոր ամբողջ Հասարակութեան անպայման հպատակութեան հաւաստիքը. իւր այս անգութեան շնորհը, որ առհաւատչեայ մըն էր խաղաղութեան, միանգամայն ամենամեծ պատիւ էր ո՛չ միայն Հայոցս, այլ և բովանդակ Արեւելի. այս Սինոգոսով պիտի ճշտուէին իրաւունք և պարտականութիւնք և պիտի իրագործուէր ցփնկալի բարենորոգութիւն մեր Եկեղեցւոյն մէջ, տալով մեզ գործելիաց իրաւարանական Մատեան մը, ըստ կանոնաց Առաքելական Աթոռոյ՝ կեդրոն ամէն բարոյական կեանքի, և ընդհանուր Եկեղեցւոյ վէմ անկեան, մատուցանելով հանդերձ փառք առ Բարձրեալն՝ այսքան մեծ յայտնութեան համար, յոյս դրած են ամէնքը իմաստուն ուղղութեան Նորին Սրբութեան, որ գերագոյն Առաջնորդն է զինուորեալ Եկեղեցւոյ, որպէսզի իւր Ս. Օրհնութեամբ կազմուեալ, կարող ըլլան երջանիկ վախճանաւ պսակել այս կարեւոր գործը, և մատուցանել զայն ի հաստատութիւն Նորին Սրբութեան. աշխատելով միշտ ի մեծագոյն փառս Աստուծոյ և ի պահպանութիւն և ի զարգացումն Կաթողիկէ Հաւատոյ. և ի հրաւէր աստուածային օգնականութեան, խոնարհաբար կը թախանձէին Առաքելական Օրհնութիւնը:

Սրբազան Քահանայապետը բարեհաճութեամբ պատասխանեց այս ուղերձին սա խմանտներով.

Կարսայայտէր իւր գոհունակութիւնը, տեսնելով ի մի խմբուած Հայ-Կաթողիկէ Պատրիարք ու Եպիսկոպոսները եւ այս գոհունակութիւնը մեծ էր ապաքին, զի գոռնարուած էին ասսի Հոռոմ, Սինոդոսի հաւատ, որուն նմանը չէր տեսնուած ուրիշ Քահանայապետ մը: Բարեյայտող էյք, Սինոհոդոսին կը մաղթէր

որ պիտի մասնաստեղ քարեկարգական նորոգութեանց հարկաւոր կանոնները, եւ պիտի սահմանէր կղերի ու ժողովրդեան միջեւ փոխադարձ յարաբերութիւնները . ինչ որ պիտի նպաստէ խաղաղութեան եւ հանձնացնութեան Հայ ազգին, ի փառս Աստուծոյ եւ ի փրկութիւն հոգւոց : Եւ այս Սինոդոսը կը գումարուի ի Հռոմ, Հռոմ՝ հայրենիք առեւն Կաթողիկէից, ուր կուգան Կաթողիկէայք իբրեւ իրենց սեպհական տունը, Հռոմ՝ ուսից կը ծաւալի յոյսն՝ որ կը յուսաւորէ միտքերն, եւ եռանդն՝ որ կը յուսաւորէ պիտի շարժեւորէր : — Սրտագին մաղթանքներ կ'ընէ որպէս զի այս Սինոդոսը՝ որ կենսական պահանջ մըն էր, երջանիկ վախճանի մը յանդէս, որով Հայաստան՝ ուսից եկաւ Արեւը, ինք ջննայ խաւարի մեջ : Յոյս մեծ ունի որ Աստուած պիտի օգնէ Սինոդականաց՝ այն առեւն տրամադրութեանց մեջ գորս պիտի առնուն ի քարին եւ ի յաջողութիւն իրենց եկեղեցւոյն : Յանուն Եպիսկոպոսաց յայտնած էր Պատրիարքը՝ սիրոյ, մեծատանաց եւ յարուսի հաւատասիր . կը յուսայ Նորին Սրբութիւնն որ առեւնք միաբան պիտի հանապատասխանեն այս իրոճերու : Կը շնորհաւորէ նաեւ նորընտիր Եպիսկոպոսները եւ կը մայրիկ որ առեւնն ալ գորաւոր Առաքելներ ըլլան : Ինքն Քահանայապետն էր որ ուզեց ուղղակի ընտրել այս Եպիսկոպոսները աստ ի Հռոմ . այս անգամուսն համար զանց ընելով ընկալեալ սովորութիւնը . ինքն Քահանայապետն էր որ՝ այդեայդ պարագայից բերեալս հարկաւոր դասեց հոս գումարել Սինոդոսը :

Ապա հանդիսապէս շնորհելով Առաքելական Օրհնութիւնը, ընտանեալ քար շարունակեց խօսակցութիւնը, եւ կրկնեց թէ իր հրամանաւ եղած էր այս ամէնը . այսպէս պատշաճ դատած էր ի Տէր : Եւ իւր բերանացի շնորհաւորութեանց առեւցոյց զգալի շնորհ մըն ալ, ընծայելով նոր Եպիսկոպոսաց մէջ մէկ հաստ գրուագեալ գեղեցեկ Լանջախաչ սովեղէն : Ապա ընդունուեցաւ Սինոդի Պաշտօնէից խումբը, որոց սիրալիւր կերպով խօսեցաւ Սրբ. Հայրը, որուն գէմքին վրայ կը շողար կարծես երկնաւոր լոյս մը, եւ ալէզարդ ճակտին վրայ կը ցոլար գահաւանդութիւնը : Վսեմ գիրքով մը յատնկայտ յորդոր կարգաց անոնց անխոնջ աշխատութիւն հուրիւրու Սինոդոսին, նկատելով գարծայն արտակարգ կարեւորութիւնը . եւ Ս . Աջը համբարել տալով օրհնեց զանոնք : Ապա կրկին շնորհակարարութեամբ եւ Աւանդաւորիւ մեկնեցան ամէնքն, ճշմարիտ Հօր մը այսքան անակնկալ բարեացակամութենէն խորապէս յուզուած :

Այցելեցին ապա վսեմ . Կթրդինալ Մէրի տէլ Վալը՝ Վատիկանու իւր սեփական յարկարաժնին մէջ . արգին վերաբերում ունեցաւ Ծիրանաւորը ամմուն հետ, իրախոսելով մանաւանդ Նորընտիրները : Նոյնպէս Սինոդականք Մաճճօրտօմոյ Գիր . Պիլէթիի քով գնացին ի շնորհակարարութիւն :

և շնորհաւորեցին իւր ուղեորութիւնն ալ զոր պիտի կատարէր Վիեննայի մօտ Եռօրոցաւ ամառանոցին մէջ իբրեւ Քահանայապետական ներկայա-
ցուցիչ կայսերական իշխանազուն Արհիդուքս Կարոլոս Ֆրանց Եօզէֆի
պապին օրհնելու շնորհիւ իշխանուհայն Բարմայի :

Վաղիկանէն ելլելով Սինդալիանք մտան Ս. Պետրոսի տաճարը ,
շնորհակարութիւններ մատուցանելու համար Աստուծոյ :

— Հոկտեմբեր 14 ինչ շաբաթ օր , յետ միջօրէի ժամը 5 էն Դու կէս , Հա-
մագումար առաջին ժողովք տեղի ունեցաւ Եկեղեցւոյ մեծ Աւանդատան
մէջ՝ որ Ասագ խորանին ետեւն է . անոր մէջ ճշգոտեցան ներկայ Հարց
թիւր , բացակայից պատճառները , Սիւնհոգոսի գործերու եղանակը . կա-
ռաւարուեցաւ Պաշտօնէից անուանումը՝ արձանագրութեան համար , ինչպէս
նաեւ Գաղտնապահութեան սովորական երգումը . Մասնակի ժողովներու
ուսումնասիրութեան համար Գործոց առաջին Տիտղոսը բաժնուեցաւ , և ու-
րիշ Կարեւոր գործերու աւարտումէն վերջը փակեցաւ ժողովը ժամը 7,30 ին :

* *

Կիրակի առաւօտ 15 Հոկտ. ժամը 8 փն Ամենապատիւ Հոգեւոր Տէ-
րը զգեստաւորեցաւ մեծ աւանդատան մէջ , Եպիսկոպոսները առին շուրջաւ ,
ուրար և թագ . և կազմուեցաւ հանդիսաւոր թափօրը և ժողովրդեան մէջէն
անցնելով գնաց մինչեւ Եկեղեցւոյն մեծ դուռը և հոն սկսաւ ըստ սովորու-
թեան ձայնաւոր Ս. Գատարագ . և Ընտրեալք Աստուծոյ յ. Մուկդիէն
վերջը Թափօրով խորաններու առջևէն անցաւ Սրբ. Պատրիարքը օրհնե-
լով և ինկելով . և այսպէս շարունակեց ձայնաւորը զարմանալի կոնմուա-
րութեամբ . երգեցողութիւնք կատարուեցան դպրոցին աշակերտաց կող-
մանէ այնպիսի գեղեցիկ և կարգաւոր եղանակաւ որ նոյն իսկ ներկայ
Եւրոպացւոց գրեթէ ամբողջութեան զարմանքին ու պովառանաց արժանա-
ցան : Իսկ ժողովուրդը լեցուն էր Եկեղեցւոյ մէջ . ներկայ էին Եկեղեցա-
կան պաշտօնեայք մասնաւորապէս հրաւիրուած , որոնց մէջ կը գտնու-
էին նաեւ Մօնա . Ռոլլէրի , բոլոր Արեւելեան Պատրիարքաց Գործակալատարնե-
րը , Այլ և այլ դպրոցներ և վանքեր ներկայացուցիչներ զրկած էին : Զայ-
նաւորէն վերջը գասին մէջ մասնաւոր մաղթանքներ կատարուեցան :

Ապա Հարց գնացին Սիւնհոգոսին տեղը , որ պատրաստուած էր ճիշդ
Եկեղեցւոյն միջավայրը . Ամենապատիւ Գահերէցը ի միջի երեսը յԱսագ
Սեղան , և Եպիսկոպոսները աստի և անտի՝ ըստ կարգի Երիցութեան , և
պաշտօնեայք իւրաքանչիւր իրենց տեղը : Այս պահուն ծիրանի կրօնաւոր
մը Յիսուսեան Հ. Կալէթթի , մասնաւորապէս պատրաստուած ամպիոնն

եղաւ՝ ըստ պատշաճի հանդիսութեան քարոզ մը խօսելու. Գարողիչը՝

Սիւնհոդոսական հարց խօսք ուղղելու անկարող խոսովանելով զինքն, կարճ ի կարճոյ յիշեցուց Հայ Ազգին վաղեմի փառքերը, Ս. Առաքեալները, որք քարոզեցին Ս. հաւատքը. անգուցական Հայրապետ Ս. Լուսաւորիչը, եւ կարողիկեութեան անընդհատ շարունակութիւնը ի Հայաստան, որչափ աչ հակառակորդի գորաւոր եղած ըլլան. յիշեցուց ալ եւ ալ ծեսակ ժողովները, եւ երջանիկ գտաւ. ներկայն որ Բահանայապետին հրամանաւ եւ Օրհնութեամբ կը գումարուէր. շնորհաւորեց Հայրերը: Լեւոն ԺԳ. փառապանծ Բահանայապետը երկնիքն կը քարեխօսէր իրենց համար. եւ Պիոս Ժ. իբրեւ հայր խնամակալ էր յերկրի, եւ Հայ ազգին մասնաւոր գուրգուրանով կը վերաբերուէր: Խրախոսեց, ստապնեց, սիրոյ եւ միաբանութեան յորդորեց եւ մանաւանդ յարուժի առ Ս. Գահն. քանզի այն սիւնհոդները միայն ճշմարիտ յայտը եւք ունեցան, որոնք Ս. Արքունցն հովանւոյն ներքեւ կասարուեցան: Պիտի ստրկեցնէք ինչ որ Բրիտանոս հրամայած է, եւ նա մեզի հետ պիտի ըլլայ միշտ եւ համապալ, քանզի ըսած է թէ « ուր որ իմ անուամբս երկու կամ երեք հոգի միաբանին, ես ալ անոնց մէջն եմ »: Ամեն քան պէտք է նորոգէք ի Բրիտանոս՝ ըստ նշանաբանին Պիոսի Ժ.ի, եւ իբր գործ առնելեաց մասեան մը պատաստէք մեր ազգին համար, հաստատած Ս. Արքունցն: Ձեր ջանքերով Սասանեան եւ իր մոլորութիւնները ու գալթակոտորիւնները վերանան ժողովրդոց մէջէն, եւ Բրիտանոս փառաւորութի, եւ Բրիտանոս սիրութի եւ քաջաւորեք ի յայտեսան:

Գարողէն վերջը հաւատացեալք զուրս ելան եւ Սիւնհոդոսը առանձին մնաց Եկեղեցւոյ մէջ: Գահերէց Ամինապատիւ Պատրիարքը ըստ պատշաճի բացման ճառ մը խօսեցաւ եւ Սիւնհոդոսը սկսաւ իր առաջին Նիստը: Այս մեջցիւ Հռովմայ Բահանայապետական Փոխանորդ՝ Կարդինալ Ռէսսըրկինն զրկուած նամակ մը կարգացուեցաւ որով կը շնորհաւորէր Սիւնհոդոսին բացումը եւ քարեմաղթութիւններ կ'ընէր: Ապա Նիստը շարունակուեցաւ մինչեւ ի Ժամ 12: Եւ Սիւնհոդ Ս. Բահանայապետին զրկեց հետեւեալ հեռագիրը.

« Պատրիարք եւ Եպիսկոպոսներ Հայոց՝ ազգային ժողովի այս առաջին նստին մէջ գումարուած՝ կը խնամեցնեն Ձեր Սրբութեան առջեւ որդիական հնազանդութեան եւ սրագին երախտագիտութեան հաւատարմութիւն, զի հանեցաք ժողովել զիրենք Ա. Պետրոսի Արքունցն շուրջը. կը հալցեն առաքելական օրհնութիւն »:

Սրբապան Հայրը կը հաճէր քիչ վերջը պատասխանել Կարդինալ Մէրի-Տէլ-Վալի միջոցաւ.

Սրբապան Հայր, Պիոս Ժ. Դժապէս հաճեցաւ քերական « Վերսեւուրն յորհաւելն, զոր ճարտոյ Հայ Նախարարութեանը՝ Գումարուած յալֆային Սիւնհոդոս ընդ հովանեաւ Ամենայն Սրբոյն Պետրոսի, եւ ճալմելով որ ներկայ Գումարումները քերական եղանակաւ օգտաւոր հանդիսանան Պարբերութեան եւ Հայ Սեմբոն շուրջում, միապատէ կ'օրհնէ որք զեղնաժող Ձեր Ամենապատէ Տէրութեանը եւ Եպիսկոպոսաց Երախտագիրը »:



ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԱՌԱՅ

ՊՕՂԱՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԵՐԶԵԱՆ

ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԸ ԱՍՏՈՒԵՈՅ ԵՒ ՇԵՈՐՀԻՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԺ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Սիրեցեալ որդւոց մերոց ի Քրիստոս Գեր. Վարդապետաց եւ

Հաւատացեալ Ժողովրդեանն Վիճակին.....

Սիրեցեալ Որդեակք ի Քրիստոս

Աստուածային անկենիւն Նախախնամութիւնն որ՝ կոչելով զՄեզ ի բարձր Պաշտօն Կաթողիկոսութեան Կիլիկիոյ, յանձնեց Մեզ այս փոքրիկ հօտը՝ պատրաստութիւն դնելով Մեր վրայ խնամել, հսկել եւ ուսուցանել. իւր երկրպագելի կամփով կը պահանջէ նաեւ որ մեր Պատրիարքութեան վիճակակից Աթոռներուն ճշմարիտ բարոյն վրայ դարձնենք Մեր աշխարհ եւ մեր հայրական մասնաւոր խնամքները: Արդ, Պատուական Որդեակք, Մեր Կաթողիկոսութեան առաջին օրէն ի վեր մեծ մտահոգութիւն եղած է մեր արջին տեսնելը թէ Չեր թեւր, որ աշխարհ մէկ կարեւոր մասը կը կազմէ մեր Կիլիկիոյ Պատրիարքութեան, անշափ ժամանակէ ի վեր այրիացած եւ իր հովիտէն զրկուած, չէր կրնար աշխուհաւորութեւ աշխարհ վիճակին հետեւաբար Չեր թեւին մէն մի հաւատացելոց՝ մեր Սիրելի Որդւոց քախանձքը գրեթէ կը հնչէր ցանց մեր ականջներուն, որոնք հովիւ մը կը հայցէին իրենց, հայր մը զիրենք խնամելու, Քրիստոսէ Առաքեալ Դիտապետ մը՝ իրենց հոգւոց փրկութեան մեծ գործին օգնական եւ սատար ըլլալու: Եւ այնպէս Սուրբ Աթոռը կը յիշեցնէր Մեզ մեր պատրաստ աշխուհաւորութեան ի պարսպութեան չթողլու մեր թեւերը: Ուստի՝ երբ ի Հոռովմ եկանք յայցելութիւն Սեմոց Սրբոյ Առաքելոյն, ի մէջ այլ բազում իր հոգոց, պարզեցինք նաեւ մեր այս մտահոգութիւնն Սրբազան Հօր առջեւ, թէ որպիսի դժուարութիւնք

էին որ կը կատեցնէին զՄեզ Եպիսկոպոսաց ընտրութեան գործոյն մէջ թէ բարի վկայութեան գործը տալնապալից կ'երեւեր Մեզ՝ ոմանց զրգոնալ ոգոց ապօրինի արարներուն եւ կուսակցութեանց աշտոնութեան եւ շահախնդիր մարդահաճութեան համար եւ թէ այժմեան դրութեամբ զրեթէ անյաղթելի դժուարութեանց պիտի հանդիպէինք բարի վկայութեան գործը ի գրոյիս հանելու, մանաւանդ որ առ այս նիւթական ժամանակն իսկ կը պակսէր:

Որով եւ նորին Սրբութեան աղաչեցինք խոնարհաբար որ ցոյց տայ մեզ ելլի միջոց մը: Սրբազան Հայրն լսելով այս ամենը, եւ ժամանակ մը խորհրդածելով՝ որոշեց այս անգամուն համար իւր առաքելական. Եշխանութեամբ արտաքին կարգի եղանակաւ, ճեշտել եւ ճեղհել Ձեր այրիացեալ Թեմին Եպիսկոպոսական ընտրութեան գործը, եւ իւր բարեհաճութեամբ Ձեր Թեմին վրայ Ինքն ուղղակի վիճակաւոր Եպիսկոպոս կարգեց եւ հաստատեց զարժանաւոր եւ զմաքակտեցաղ արհիապատիւ Տէր Ա. Ա.:

Եւ Մենք իս բարձր հրամանի Փոխանորդին Քիսնոսի՝ Սրբազան Քահանայապետին Մերոյ Պիոսի Ժ.ի զնոյն Արհի, Ա. Ա. ի Հոռով յեկեղեցոյ Ս. Նիկողայոսի Տոյենքնացոյ, ի 22 Հոկտ. ձեռնադրեցինք ի վիճակաւոր եւ ի կարգաւոր Եպիսկոպոս ձեր Ա. Ա. Թեմին վրայ: Ապաքեն Ձեր նոր օծեալ Արհի. Եպիսկոպոսն թէեւ խոնարհաբար կ'ուզէր խուսափիլ Եպիսկոպոսական ահաւոր աստիճանէն, սակայն երբ Սրբազան Քահանայապետին հեղինակաւոր ձայնը խօսեցաւ, հշտութեամբ հնազանդեցաւ եւ ստանձնեց այս ծանր լուծը:

Կը տեսնեմք, Սիրեցեալ Որդեակք, որ Աստուածային Նախախնամութիւնը անհաս խորհրդով, այսպէս կարգադրեց ձեր թեմին վրայ. բացառապէս է իւր կամքն ու տրամադրութիւնը, զոր կը յայտնէ իւր երկրի վրայ Սրբազան Փոխանորդին ձեռնով: Արդե՞ն հոս ի Սինոդոսի ներկայ զտնուող մեր Վիճակակից Արքեպիսկոպոսունք մեծապէս գոհ մնալով Քահանայապետական բացառիկ տրամադրութենէն, գրեցինք նաեւ միւս Արքեպիսկոպոսաց եւ Եպիսկոպոսաց որոնք չկրցան գալ ի Սինոդոս. բնականաբար անոնք ալ պիտի ուրախանան Սրբազան

Հոր այս բարեհաճ հոգածութեան վրայ: Ուսի անսարակոյն է որ, դուք ամենից ալ այսպիսի երկնաւոր սրամաղորութեան մը հպասակելով, եւ Աստուծոյ ձեռք վրայ ունեցած հայրագործի խնամոց եւ Սրբազան Քահանայապետին առ ձեզ տաճած մասնաւոր սիրոյն համար ուրախանալով, որդիական սիրով եւ օրինակելի հպասակութեամբ պիտի պատուէք այսպիսի նախախնամական պարագաներու մէջ ձեզի շնորհած Հովիւր, որ պիտի ըլլայ ձեր գործադուք հայրը, խնամոց եւ աշխուրջ դիտարկութեամբ, անձնանուէր առաքելաւոր, որ անխոնջ պիտի վասակի ձեր հոգւոց փրկութեանը եւ ձեր ամենուն հոգեւոր ու մարմնաւոր բարօրութեանը:

Այս ամենուն, սիրեց. Որդեակի, ստոյգ առհասարակաց եւն մոյն Արհի. Տեառն բարեմասնութիւնները, որոնցմով Տերն օժտած եւ զարդարած է զինքը. նա իւր քահանայական անբասիր ընթացքին մէջ գիշեր ցերեկ աշխատած է իւր կողման համաձայն վարուելու, ուսուցանելով եւ մխիթարելով, աղօթելով եւ փառաբանելով. եւ զարդարուելով չփնայ առաքելութեամբ: Ուսի հաստատուն յուսով կը յուսամք որ դուք իրով եւ ինքն ալ ձեզմով՝ իբր սիրելագոյն հայր եւ որդիք, ցանկ երջանիկ պիտի ըլլաք, զոր ի բոլոր տեսէ կը մաղթեմք եւ որուն համար անդադար աղօթող իսկ եմք: Եւ ինչ որ հնար է օգնութիւն մեր կողմանէ, բնաւ պիտի չի զրանամք ի բարեօք մասակարարութիւն եւ ի բարօրութիւն ձեր քեմին, որ անշուշտ պիտի յաջողի մեր ամենուն հոգածու հօր, Սրբազան Քահանայապետին Մերոյ Պիոսի Ժ. ի խնամածութեամբը:

Եւ Մենք ալ այս բարեյաջող գործոյն համար ի սիրս եւ ի հոգի ցնծալով, իբր գրաւական մեր հայրական անկեղծ եւ աննիւղ սիրոյն, կը շնորհեմք ձեր խրափանջիւրիւն մեր հայրապետական Օրհնութիւնը:

Տունալ 'ի Հռովմ տրտաւոյ դրանն Ս. Պօղոսի.

ի Հոկտեմբեր և. Տ. 1911.

✠ ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԵՐԱԶԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԱՐԲ ՏԱՆԸ ԿԻՆԿԻՈՅ

ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐ

1. Բղրդուկալի բազմադէտ և կրօնից հակառակամարտ նոր օրէնքին սրբապգծութեանց դէմ բողոքող տեղական պարտաճանաչ Նուիրապետութեան Կաթողիկեայ աշխարհիս ամէն կողմէն, ինչպէս ըսած էինք, համակրալից և մխիթարական թղթեր և հեռագիրներ փութացած էին տեղացիներ, Եպիսկոպոսներ, և ասոնց մէջէն՝ իբրեւ գեղեցկագոյն նմոյշ, մեր ընթերցողներուն մատուցեր էինք Գաղղիացի Վսեմ. ծիրանաւորներուն գրութիւնը: Այս գրութիւնէն շատ գոհ մնալով Սրբազան Քահանայապետն, հրաման ըրած է իւր Արտաքին գործոց Պաշտօնից Վսեմ. Կարգինալ Մէրի տէլ Վալին՝ իւր բարձր հաճութիւնը նշանակել Գաղղիոյ Նուիրապետութեան: Ահա այն նամակը զոր Կարգինալ Պաշտօնիցն կ'ուղղէ առ Վսեմ. Կարգինալ Գուլիէ՝ Արքեպիսկոպոս Լիւնի:

Վա. ֆիլան, 8 Սեպտեմբեր 1911

Վսեմաշուք Տէր.

Փութացի Սրբազան Հօր մատուցանել այն նամակն զոր Գաղղիացի Կարգինալներն՝ յանուն իրենց և յանուն Արքեպիսկոպոսաց ու Եպիսկոպոսաց Գաղղիոյ, ուղղեցին առ Նորին Երանութիւն՝ Պատրիարքն Լիզպոնայ, և առ Եպիսկոպոսունս Բորդուկալի. այս թուղթը Ձ Սեպտեմբեր թուականաւ հրատարակեց Osservatore Romano թերթը:

Այն համակրանքն ու սքանչացումը՝ զոր տոյքան ազնիւ զգացումներով կը յայտնէք՝ Ձեր պաշտօնակիցներուն վշտացը համար, յուզեցին փրկակեցուցին Մայրապոյն Քահանայապետին սիրտը: Արդէն՝ նմանօրինակ փորձութեանց մէջ Ձեր ու Գաղղիոյ բոլոր Եպիսկոպոսաց տուած գեղեցիկ օրինակներն, շինութեան հանգէս ու տեսարան մը եղած են: Նորին Սրբութիւնը սիրայօժար կը յիշէ այն խորին սէրն ու յարումը զոր այն աստին ցոյց տուիք՝ դէպ առ Փոխանորդն Յիսուսի Քրիստոսի:

Այս պատճառաւ, Նորին Սրբութիւնը զեղմամբ սրտի կը շնորհէ Զեզ՝ վսեմաշուք և Գերագնիւ Տեառնդ, և Զեր մեծարոյ Ընկերակցաց՝ իւր Առաքելական Օրհնութիւնը:

Իմ կողմանէս, օգուտ կը քաղեմ այսչափ նպատաստուր մէկ պարագայէն՝ ներկայացնելու համար Զեր վսեմութեան իմ խորին մեծարանացս յարգադիր հաւատովքը. և խնդրելով Զեզմէ որ հաճիք միւս Գաղղիացի վսեմ. Սիրանաւորներուն ևս հաղորդել իմ սրտեւանդն զգացումներուս արտայայտութիւնը, յարգանքը կը համբուրեմ Զեր ձեռքերը

Եւ մնամ ամենախոնարհ ծառայ.

Զեր վսեմութեան

Ռ. Կարգ. Մէրի տէլ վալ

2. Հիմա կ'ուզենք մեր ընթերցողաց ուշադրութեան յանձնարարել այն գեղեցիկ պատասխանն զոր՝ յանուն Եպիսկոպոսաց Բորգուկալի, Լիւնի վսեմ. Կարգինալին ուղղեցին՝ Նորին Երանութիւն Պատրիարքն Լիզպոնայ և Արհի. Արքեպիսկոպոսունքն Պրակայ և Էվորայ.

վսեմաշուք և Մեծարոյ Տեարք.

Զմեզ տառապեցնող աղէտից մէջ եթէ կայ բան մը որ կարող ըլլայ խրախոյս տալ մեզ և զօրացնել զմեզ Տիրոջ կռիւններուն մէջ, այն ալ՝ մեր ապաւէնն ու մեր ոյժն եղող Բարձրելոյն օգնութենէն վերջը, ծայրագոյն Քահանայապետին քաջալերութիւններէն ու օրհնութիւններէն վերջը, սիրոյ այն համերգն է, որով մեր եղբարք՝ Եպիսկոպոսներ, սիրալիւր խօսքերով մրցեցան ցաւակից ու մխիթար ըլլալու մեզ:

Ճիշդ այսպէս պատահեցաւ:

Աստուած որ կը մխիթարէ խոնարհները, մխիթարեց զմեզ ձեր այն նամակովն զոր ղրկեցիք Լիւնէն, ի 23 Օգոստոսի, թէ՛ յանուն ձեր, վսեմ. ու մեծարոյ Տեարք, թէ՛ յանուն բոլոր գերամեծար Դիտապետաց Գաղղիական ազնուատոհմ ազգին, նշանաւոր պատիւ զոր բնաւ չպիտի մոռնանք:

Սուկայն ինչ կար զարմանալու: Գաղղիոյ ձեր Եկեղեցին կրնայ կըրկնել բանաստեղծին՝ Դիդէի վերագրած խօսքը. « Ես ո՛չ անգէտ վշտաց, թշուառներու յօգնութիւն փութալ կը վարժուիմ »:

Ուստի, զրկելով Ձեզ ի խորոց սրտէ մ'որ իւրին նորհակալութեան արտայայտութիւնը, կ'ողջունենք ի ձեզ յօժարութեամբ մեր անխոնջ գրօշտկիւնները: Վասն զի, երբ արժանի եղաք Քրիստոսի համար չարչարուիլ սորվեցուցիք մեզ և զեռ կը սորվեցնէք՝ յիշատակելի օրինակաւ, բնաւ երբեք չգողալու հակառակորդաց առջև:

Եւ հիմա որ մեր կարգին պիտի պայքարինք, ինչպէս որ դուք պայքարեցաք, մենք՝ Եպիսկոպոսաց ամենատրուակաները, չարչարակից ըլլալով ձեզ, չենք կորսնցներ մենք մեր վստահութիւնը. նա՛ մանաւանդ ուրախ ենք որ արժանի դատուեցանք Յիսուսի անուան համար չարչարուելու:

Քաջասիրտ և անվեհեր զօրագլուխներու օրինակը՝ դեռ պատերազմի չվարժուած զինուորներու սրտերուն մէջ կը խրախուսէ կը զարթուցանէ քաջութիւնը. « Եւ կը պատահի որ իրենց առջև այնքան սրտապինդ քաջամարտիկ նահատակներու յաղթանակը տեսնողներուն հոգին չվրդովիր ճակատամարտի մէջ » (Ս. Գրիգ. Մեծն):

Աստուծոյ օգնութեամբը բնաւ չպիտի վհատինք. քանզի գիտենք որ Աստուծոյ կենդանւոյ Որդւոյն խոստումները չեն կրնար զմեզ խաբել. և պատմութիւնը մեզ կը սորվեցնէ թէ Եկեղեցին՝ նոյն ինքն Քրիստոսէ շինուած անասան ժայռի վրայ, միշտ պաշարուեցաւ, բայց բնաւ չյաղթուեցաւ: Կարող է Աստուած, իր սահմանած ժամուն, և երբ քառութիւնը կատարեալ ըլլայ, կարկառել իր յաղթական ձեռքը և ոչնչացնել իր թշնամիները:

Արդէն ձեր քով սկսուած է տեսնելու Սրբազան Հօրն Մերոյ Պիոսի Ժ.ի խօսքին կատարումը, որ կը նախագուշակէր թէ Գաղղիոյ Եկեղեցին պիտի գտնէ միւսանգամ՝ հին օրերու փառքն ու բարօրութիւնը:

Մի՛թէ ձեր երկրին մէջ չէ՞ որ մեր սիրեցեալ Փրկիչը տեսանելի կերպով յայտնեց իւր Սիրտը: Մի՛թէ ձեր հողին վրայ չէ՞ որ Անուրատ Կոյսն հրաշալեօք երևցաւ: Որպիսի՞ փառաւոր ու անթիւ առանձնաշնորհումներ չընդունեցաւ ձեր ազգը Երկնքէն:

Մեր Բորգուկալն ալ կը պատուէ՝ գորովալիւ եռանդով մը, Յիսուսի Ս. Սիրտը, և զՄարիամ՝ յղացեալ առանց մեղաց. ընդունեցանք մենք Անոնք բարութենէն մասնաւոր սիրոյ բացայայտ նշաններ, և մեր վստահութիւնը գրինք Անոնք երկնաւոր պաշտպանութեան վրայ:

Շարունակեցէ՛ք ուրեմն, կ'աղաչենք, ո՛վ մեծարոյ Եպիսկոպոսներ, մեր յայժ սիրեցեալ Եղբարք, շարունակեցէ՛ք աղօթել մեզի համար, որպէս զի Յիսուս և Մարիամ՝ վերջապէս գթալով մեր վրայ, Լուսիստանիոյ մեր սիրական Եկեղեցին ազատեն այնքան անձկութիւններէ ու վտանգներէ, ի փոխարէն, ընդ միշտ պիտի պահենք ձեր հազուագիւտ բարեսրտութեան յիշատակը, և պիտի հայցենք՝ Ձեզի և ձեր ժողովրդոց համար, Աստուծոյ ամէն ջնորհքներն՝ որ Հայր է գերազանցապէս Բարի:

Մատուցեալ ի համբոյր Ձեր Սրբազան ծիրանւոյն, մենք Մետրապօլիտք, յանուն մեր և յանուն համօրէն Եպիսկոպոսաց Բորզուկալի, կը ստորագրենք՝ մեր սրտերուն երախտագիտութեան այս վկայականը, և կը խոստովանիմք զմեզ Ձեր՝ վսեմաշուք Տեարցդ, կարի անձնանուէր և յարգադիր ծառայք...

(Կը հետեւին ստորագրութիւններ):

ԾՄՄԱՌԷՆ ՆԱՄԱԿ ՄԸ

Առ Դերլ. Յովն. Մ. Վ. Գուգեան

Մեծառ. Զմեառու

ի Զմեառ. 27 Սեպտ. 1911

Գերյարգելի Տէր,

Խորին յարգանքօք Ձեր ցանկալի որպիսութիւնը հարցանելէ զկնի, յայտ առնեմ զի ներկայիս թուականէն մի քանի օր յառաջ՝ ընդունեցանք յարգանքօք նորին Գերհրշանկութեան 8 Սեպտ. թուակիր շնորհագիծ Շրջաբերականն, որով կը հաճի Նա ինքն Ամենապատիւ Հոգեւոր Տէրն մեր ծունուցանել թէ երիցս երանեալ Սրբազան Քահանայապետին արտօնութեամբ և շնորհիւ, եզական պայմաններու մէջ պիտի գումարուի այս անգամ ազգային Սինոդոս մը 'ի Հռովմ' կաթողիկէութեան Քաղաքամայրն, ուր արգէն հրաւիրուած է մեր ազգին բոլոր հոյակապ Նուիրապետութիւնը որք իրենց գերզգօնութեամբը և ընդ հովանեաւ գերագոյն և անխալ Հովուապետին Եկեղեցւոյ պիտի կատարեն Նուիրական գործ մը, որուն պէտքն

ղգալապէս կը շօշափէ առ այժմ Հայ կաթողիկէ հասարակութիւնս :

Շրջաբերականն ընդունեցայ այն վայրկենին երբ Նորընծայարան կ'երթայի կրթութեան մտնող նորընծայից վերջին քարոզն տալու, որստի քարոզն կնքելէն վերջը յոտնկայս կարգացի Նոյն շնորհագիծ շրջաբերականն առաջի բոլոր հասարակութեան. և սոյն Սինոդին ազգագոգա գործոյն յաջողութեան համար առանձինն աղօթքներ յանձնարարելէն զատ՝ որոշեցինք որ յետագայ ջերմեռանդութիւններն կատարուին ըստ ժամանակին :

1. Հոկտ. 1 էն սկսեալ մինչև ցվերջ ամսուն ամէն օր որոշեալ ժամուն պիտոր ժողովինք եկեղեցին՝, և « Մայր Սուրբ » սքանչելի աղօթքն բոլոր հասարակութեամբ զուրցելով պիտի ժտենք Ամենասուրբ Կուսին հօր քարեխօսութիւնը առ իւր Միածինն, զի խաղաղութիւն արասցէ յերկինս և յերկրի. զի լուսցին ներքին պատերազմունք, դադարեցին ներկայ յարձակմունք թշնամեաց կաթողիկէ հասարակութեանս. տնկեսցի սէր և արդարութիւն յերկրի Հայ Կաթողիկէ Նախրապետութեան և, զի միաբանեսցէ զեկեղեցի Հայաստանեայց՝ շինեալ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, պահել անարատ վարդապետութեամբ մինչև յօր երևելոյ գարտեան իւրոյ :

2. Նորընծայք՝ ամէն չորեքշաբթի եւ ուրբաթ օրեր պիտի հաղորդուին այս դիտաւորութեան :

3. Հոկտ. 15 ին կիւրակէ օրը՝ բոլոր քահանայք որք վանքին մէջ կը գտնուին մէկ մէկ պատարագ պիտի զուրցեն. սոյն դիտաւորութեան :

4. Հոկտ. 15 ին նոյն դիտաւորութեան Զայնաւոր պիտի մատուցուի. և յաւարտ Զայնաւորին՝ Սրբութիւն Սրբոց Բազմոց պիտի դրուի ի ջերմեռանդութիւն ժողովրդեան :

Ասոնք եւ ասոնց նման այլ պաղատանքներ եւ պիտի մատուցանենք առ Տէրն ողորմութեան՝ որպէսզի վերջապէս մեր սիրելի հասարակութիւնն եւ ուրիշ Կաթողիկէ ազգաց պէս բարգաւաճի և կազմուի բարեղէն կարգաւորութեամբ՝ որ միայն Կաթողիկէ Հոովմէական Եկեղեցւոյ մէջ կը գտնուի :

Արդ՝ Գերայարգելի Տէր, մենք երախտապարտ հոգւով մաղթանքներ կը վերառաքենք առ Բարձրեալն Աստուած, նախ մեր հայրախնամ Քահա-հայապետին Պիոսի Ժ. ի Ս. Հօր բարօրութեան և արեւշատութեան համար՝ որ իւր հայրական գթառատութեամբ առ ազգն մեր հաճեցաւ շնորհել Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ այս փառաշուք պատեհութիւնը :

Դարձեալ ջեռին մողթանքներ կը մատուցանեմք երկնից նաեւ մեր ամենասիրելի Դիտապետին և Գ'րերշանիկ Պատրիարքին ցանկալի կենացը համար, զոր ջնորհեց Երկինք, իբրեւ երկրորդ սմն Լուսաւորիչ մեր ազգին։ Երկինք իւր հետն ըլլայ. և յաջողցնէ իւր այս ազգօգուտ ձեռնարկն՝ ի փառս Մեծին Աստուծոյ՝ եւ ի պարծանս Սրբոյ Եկեղեցւոյ։

Նաեւ մասնաւոր եռանդեամբ կ'աղօթենք առ Ս. Հոգին՝ որ լոյս տայ Սինոդական Հարց, որպէսզի կարող ըլլան Հոտարակութեանն օգտակար և Եկեղեցւոյս պայծառութեան յարմար որոշողութիւններ և կարգադրութիւններ սահմանել, որոնցմէ անշուշտ կախում պիտի ունենայ մեծաւ մասամբ ազգին բարեբաւոյնը և նորա ակնկալութեանց յաջողութիւնը։

Ահա ասոնք են, Գերյարգելի Տէր, մեր սրտին զգացումներն զորս կը զեղունք յոտս մեր պաշտելի Վեհապետին և Ամենապատիւ Պատրիարքին, խոնարհ հպատակութեամբ, անկեղծ հնազանդութեամբ և միաբան հաւատով մեր ճշմարիտ հարազատութեան ապացոյցը տալու եւ ընդունելու իւր աստուածաւանդ օրհնութիւնը։ Մենք՝ որպէս որդիք հարազատք, հորք բերկրեալք և իւր շուրջը բոլորած, պատրաստ ենք հովանոյն ներքեւ պատերազմիլ մինչեւ ցմահ. և նմին իրի՝ թէ և 'ի հեռուստ, ծունր եզեալ կը հայցեմք իւր Աստուծային Օրհնութիւնը, որպէս զի ինչպէս որ մինչեւ հիմակ մեր Զմեռեան Միաբանութիւնը՝ Սուրբ, Հռովմէական անսխալ վարդապետութեան սկզբանց ծառայեց, կարող ըլլայ նոյնպէս շարունակել մինչեւ 'ի սպառ։

Եւ մնում յարգանքօք

Գերյարգելի. Տէր

Խ. Ծ.

Գրիգորիս վրդ. Աճեմեան


Արեւիկե մասակարար

Վանուց Զմեռու

206

ԱՌ ԼՈՐԱՎԻՆ ՔԵՐՔՆ

ԱՐՁԱԳԱՆԳ



Բարի ծագումն, բիւրից բարեալ՝ քեզ Սոխալ.

Հարց հաւասոց մեր Գրիգորեան ես գուշակ.

Հա՛ն ընդ այեր դարուց ի դարս՝ ԱՐՁԱԳԱՆԳ,

Կորուսելոյ ճշմարտութեան լեր՝ փրկանք:

Յարեւմտեց զաս՝ յԱրեւելս՝ ճօն ի ճօն.

Հոփսսիմեան բարձեալ բերես սուր բզկոչ.

Արեւելից ընդ Արեւմուսս գոլ մի հօս.

Ջուս հաւասոց հրաւիրես յանգալ զօդ:

Մի՛ երկնչիր դարուս յալեաց հողմակոծ,

Բրիստոսադիր անշարժ վիմի ես ի ծոց.

Լուսաւորչի ճե՛տք բիւրաւոր հարազատ՝

Ասպնջական լիցին քեզ միշտ անընդհատ:

Տրուպն Պօղոս լի մեծանայ ի Պետրոս.

Վեմբն Պետրոս լինի անշարժ ի Բրիստոս.

Բրիստոս Աստուած փառաւորի ի Պետրոս,

Պետրն Պետրոս պատուով յարգի ի Պօղոս:

Կեցջիր՝ ցմիշտ՝ քաջդ ԱՐՁԱԳԱՆԳ. յաւիտեան

Հռովմայ ի զօդ անդրդուելի Միութեան

Ես ի յարգի. յաջող ի գործ գրութեան.

Յորքան լիցի Հաւասոյ Պետն քեզ պաշտպան:

Ներսէս Գ. Ջրեւն

Ս. ՎԱԿԱՆԻՔԱՆԻ Ի ԲԱԿԻ

ԹԵՄԵՐՈՒ ԶԱՅՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆՑ

1. Պաշտօնական Յայտարարութիւն Խարքերի Թեմեմ

Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն յետոյ Հասարակութեանս Նուիրապետն եղող Տանն Կիլիկիոյ Նախկին Կաթողիկոս Պատրիարք Ամեն . Պօղոս Պետրոս ԺԲ . ի առաջարկին և հրամանին զօրութեամբն ու հետեւանօք , մայրաքաղաքն գումարուած Աւագանւոյ կամ երեսփոխանական ըստուած ժողովոյն մէջ , վիճակիս իրր ներկայացուցած , ընտրած և որոշած էինք վսեմաշուք Տեսար Յովհաննէս էֆ . Գարտաշեանը :

Նկատելով որ հրաժարեալ Պօղոս Պետրոս ԺԲ . ի օրինաւոր յաջորդն Պօղոս Պետրոս ԺԳ . Տանն Կիլիկիոյ մեր Ամեն . և Գերերջ . Կաթողիկոս Պատրիարքն և արժանաւոր հովուապետն իր ձեռնհաս իշխանութեամբն և օրինական պատճառներով մերժած է և չի ճանչնար այդ ժողովը , հետեւաբար Խարքերի Թեմիս վիճակաւորն , ամբողջ կղերն ու ժողովուրդը այլ եւս չեղեալ համարելով այդ ընտրութիւնն հրապարակաւ կը յայտարարենք թէ չունինք այսուհետեւ և թնաւ չենք կրնար այլ եւս ճանչնալ ո՛ր և է ներկայացուցիչ՝ կամ ինչպէս կ'ըսեն , երեսփոխան՝ այլ եւս գոյութեան իրաւունքէ զրկուած անգլուխ և ինքնազուխ ժողովոյ մը մէջ :

Յայտարարութեանս ստուգութեան և վաւերականութեան համար կ'ստորագրենք :

Մ . Ազիզ . 10 Սեպտ . Ն . Տ . 1911 .

Գրիգոր վ . Փիլիպպոսեան : Ղեւոնդ վ . Մինասեան : Սարգիս վ . Խաչատուրեան : Ներսէս վ . Պաղտիկեան՝ ժողովրդապետ Դատեմի : Յակոբ վ . Փարթամեան՝ ժողովդպ . Արարիկիւրի : Եպիսկոպոսական Փոխանորդ Տ . Պօղոս Գր . Գալանճեան : Տէր Սարգիս Գր . Ննովկերեան : Յովհաննէս վ . Ներսէսեան Հոգարարձու Փէռչէնճի , Օգնական ժողովրդապետի ի Դատեմ , ժողովրդապետ Բաղմաշէնի : — Գասպար Խաչատուրեան : Խաչատուր Թաւճեան : Գէորգ Ղեւոնդեան : Մինաս Ստեփանեան : Յարութիւն Նազլեան : Յարութիւն Խաչատուրեան : Միքայէլ Վարդանեան : Եղիա Ստեփանեան : Պօղոս Վարդանեան : Պետրոս Խաչատուրեան : Յովհ . Տ . Ղազիւրեան : Գրիգոր Վարդանեան : Նիկողայոս Խաչատուրեան : Միքայէլ Նալպանտեան : Դաւիթ Յակոբեան : Պաղտատար Բրուդեան : Սիմօն Նալպանտեան : Խաչատուր Խապու-

յեան: Մեղան Յովհաննէսեան: Գէորգ Խաչատուրեան: Ահարոն Նալպան-
տեան: Պօղոս Տ. Սարգիսեան: Խաչատուր Տ. Սարգիսեան: Յովհաննէս Ու-
շանճեան: Յակովբ Խաչատուրեան: Կարապետ Թէրզեան: Աբրահամ Օնանեան:
Մարտիրոս Պետրոսեան: Աւետիս Գրիգորեան: Սեդրակ Յակոբեան: Օհան
Մ. Ստեփանեան: Յակոբ Պետրոսեան: Մարտիրոս Չնքուշեան: Մկրտիչ
Կարօյեան: Յարութիւն Կարապետեան: Պետրոս Յակոբեան: Յովհ. Գրի-
գորեան: Պետրոս Յակոբեան: Խաչատուր Գրիգորեան: Յակոբ Յովհաննէս-
եան: Գէորգ Ահարոնեան: Վարդան Խաչատուրեան: Կարապետ Ահարոն-
եան:

Հոճ և հաւան յայտարարութեանս բովանդակութեան կը հաստա-
տենք և կը վաւերացնենք Կղերիս և Ժողովրդեանս ստորագրութիւններն:
Վիճաւոր Խարբերդի:

✠ Ստեփանն Եպկպս. Իսրայելեան:


2. Եղեախայեան (Ուրփա) կը գրե Կաթողիկէ մը.

Քանի մը տարիէ ի վեր հայ ուղղափառ Հասարակութեան և մանաւ-
շանդ Պօղոս ուղղափառ Հասարակութեան մէջ Կանոնագրութեան խնդիր
մը կար բայց այս օրերս աղետալի կերպարանք մը առած է նոյն խնդիրը.
հարկաւ Երեսփոխան ըստած ժողովին մէկ քանին նոր-գլուխ և շատ զար-
գացեալ ըլլալուն համար՝ ինգրոյն ճշմարիտ կէտերը իրենց խաւար կ'ե-
րեան. և չեն կրնար հասկնալ նոյն խնդրոյն ճշմարիտ իմաստները. կամ
հասկնալ չուզեցնուն համար խնդիրը իրենց ուզածին պէս ապօրինի մեկ-
նութիւններով կը մեկնեն, որպէս զի ուղղափառ Հասարակութեան պար-
զամիտները մտորցնին. ահա ցաւալին այս եղած է: Կաթողիկոսական Կոն-
գրակներու գէմ Ս. Հաղորդութեան առջև ու Պատարագի ժամանակ եղած
սրբապիղծ իրողութիւնները ինչի՞ նմանցնեմ. անհաւատութեան. հերե-
տիկստութեան, անկրօնութեան, չիտակը չեմ գիտեր, կը վարանիմ: Իսկ
առանց նախագահի ապօրինի ժողովնի գումարուած ատենները Ամենայ.
Պօղոս Պետրոս ԺԳ. Կ. Պատրիարքի Սրբութեան հանգէպ խօսուած ան-
վայել խօսքերը, քաղաքավարութեան, կրթութեան, նոյն իսկ մարդկու-
թեան և կրօնքի գէմ եղան: Ահա ուրեմն Երեսփոխան ժողովոյ բռնած
ապօրինի ընթացքը իրենց գործքերով կը յայտնուի, այս Երեսփոխան
ըստածները անբացատրելի հակասութեամբ այսօր կը ջանան Ամենայ.
Թէրզեան Կ. Պատրիարքի գէմ տօքի հանել միամիտ ժողովուրդը, որ խան-
գավառ ակնկալութեանց մէջ է այսօր ալ իրենց արժանաւոր Հովուին

գործունէութենէն. այդ անձինք պայքար կը մղեն Կաթողիկոսի մը դէմ, որովհետեւ սա իր պարտքը կատարելով կրօնքի սուրբ սկզբունքները կը պաշտպանէ, և չթողուր որ հայ կաթողիկէ Եկեղեցին ալ ուրիշ եկեղեցեաց պէս անհիմն կազմակերպութեանց զոհէ իր հազտատութիւնը և սրբութիւնը. այս խռովարարներու շարժումն փորձեց Եգեհիոյ ժողովուրդն ալ ոտքի հանել իրենց արթուն Հովուապետին դէմ բայց շատ զարմանալին այն է որ կը յուսան թէ՛ Եգեհիոյ ժողովրդեան մէջէն պիտի գտնեն իրենց գործակից մը աւելի ուժգնօրէն իրենց հետ մարտնչելու համար Ամենապ. Թէրզեան Կ. Պատրիարքի պաշտպանողական սկզբունքներուն դէմ: Ես ալ լաւ գիտեմ թէ՛ այդ շարժումի ազդեցողի փոթորիկները կուսակցութեանց դաւադրութիւնն է. բայց ի զուր. միշտ ճշմարտութիւնը յաղթական է, և պիտի յաղթէ յաւիտեան. այս խռովարարներուն աննշան շարժումը Եգեհիոյ ուղղափառ ժողովրդեան հաստատուն մտքերը չկրցաւ թունաւորել, և հիմա Եգեհիոյ ժողովուրդը կրնայ հրատարակել որ ինքը ամբողջովին, անպայման կերպով հնազանդ է իր սիրելի և պաշտելի Կ. Պատրիարքին՝ Ամենապ. Պապոս Պետրոս ԺԳ. Թէրզեանի խմատուն Կարգադրութեանց:

Եղեասիա 10 Սեպտեմբ. 1911

Ի դիմաց Եգեհիոյ Ուղղափառ ժողովրդեան
ՎԱՍԻԼ ՍԱՊՊԱՆԵԱՆ



Փ. Պիսնի
Տնօրէն Գաղտնիքանաւոր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային Պատրիարքական Սինոդոս ի Հոռփիլ	էջ 203
Ամենապատիւ Կաթողիկոսին Կոնդակը	» 214
Երկու Նախակներ	» 217
Ջնկատեմ Նախակ մը	» 220
Զօն առ Լորածին Թերթն Արձագանգ	» 223
Թեմերու Զայնակցութիւն Կաթողիկոսական Տրանսփրոքեանց	» 224

Ազգային Պարբերական Սեռահոգոյի Առաջին Նիստը կարգեալ ներկայացնելու
համար, և որիչ նիւթերու առարկան պարճաւոր, ներկայ թիւը բացառիկ կերպով
24 էջ հրատարակուեցաւ:

Կը լինի թէ զրկուած թիւերն բաժանորդներէ ոմանց յետք կանանորայեւ զին
հասնէր. կը խնդրենք որ բաժանորդք հաճին ծանուցանել ճշտին որդեղի գարնէալ զբը-
կանին իրենց պակաս թիւերն:

